

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.  
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

**Գիտաժողովի զեկույցների ժողովածու**

ԵՐԵՎԱՆ

**ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**2009**

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, 1876Թ.  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ**

Օսմանյան կայսրությունում այլազգիներից և այլադավաններից մեկի՝ բուլղարների «լիովին կամ մասնակի» ոչնչացման առաջին ծրագիրը ստեղծվեց 1876թ.: Այդ փարվա մայիսի կեսերին բուլղարացի հանրաճանաչ քաղաքական գործիչ ու հրապարակախոս Թորոք Բուրմովը՝ լավ տեղեկացված լինելով բուլղարական ապրիլյան ապստամբության ճնշման նպատակով թուրքական իշխանությունների ձեռնարկած գործողությունների մանրամասներին, հանգեց այն եզրակացության, թե «դժբախտ ազգաբնակչության կոպորածը տեղի է ունենում սուլթանական կառավարության նախապես մտածված ծրագրով»:<sup>1</sup> Նա այդ ժամանակ գտնվում էր Կ. Պոլսում ու կարարում էր ռուսական դեսպանատան թարգմանչի պարտականությունները: Պարզ է, որ իր այդ դիտարկումը նա կիսել է նաև դեսպան կոմս Ն. Իզնավրևի հետ, սակայն արխիվային փաստաթուղթ այդ մասին չի պահպանվել:

Մայիսյան այդ օրերին նմանափայ, սակայն ավելի հստակ տեղեկություններ գրեթե միաժամանակ սկսում են ստանալ Օսմանյան կայսրության փարբեր քաղաքներում գտնվող բրիտանական և ռուսական դիվանագետները: Նրանք հավաստում էին, որ բուլղարիայի բարձրագույն իշխանություններն արդեն մշակել էին բուլղարների դեմ գործելու որոշակի ծրագիր և համապատասխան ցուցումներ էին տվել բուլղարական նահանգների տեղական իշխանություններին:

Այսպես, Ադրիանապոլսի բրիտանական փոխ-հյուպատոսի ստացած տեղեկության համաձայն կառավարության կողմից հանձնարարականներ են ուղարկվել տեղական իշխանություններին, որոնցով ցուցում է տրվել նրանց «ոչնչացնել բուլղարներին» և սպանել վեց տարեկանից բարձր բոլոր արու մանուկներին: Այդ միջոցառումների նպատակն էր «բնաջնջել ցեղը (race) և սրիպել մնացածներին արտագաղթել»:<sup>2</sup> Այդ կարևոր տեղեկության աղբյուրն էր օսմանյան բյուրոկրատիայի՝ ազգությամբ ալբանացի, մի ներկայացուցիչ:

Փիլիպոլիսի ռուսական փոխ-հյուպատոս Նայդեն Գեռովը, երբ նա ժամանակավորապես գտնվում էր մայրաքաղաքում, օգտագործելով իր անձնական կապերը կառավարության անդամներից մեկի հետ, կարողացել էր ստանալ կարևոր լրատվություն, որը միանշանակորեն հաստատում

էր բրիտանացիների տեղեկությունները բուլղարներին բնաջնջելու պլանի գոյություն ունենալու մասին և լույս էր սփռում նրա որոշ կարևոր մանրամասների վրա: Ստորև ներկայացնում ենք այդ հաղորդագրությունը բնագրի լեզվով.

«... Турецкое министерство... приняло решение, под предлогом подавления восстания, уничтожить совсем большие селения и местечки болгарские, жители которых продвинулись больше вперед, а прочие селения и города разорить грабежом башибозуков, лучших из городских жителей погубить тем или другим способом, истребить всю интеллигенцию и не оставить ни одного из учителей, воспитывавшихся в России, закрыть училища и раздавить народ до такой степени, чтобы лишить его всякой возможности оправиться когда-либо и придти опять в нынешнее состояние, чтобы быть опасным для господства турок, и наконец, как можно будет отуречить часть его, чтобы еще больше ослабить его».<sup>3</sup>

Ադրիանուպոլսի ռուսական հյուպատոսության կառավարիչ իշխան Ալեքսեյ Յերեպելը Բուլղարիայում տիրող իրավիճակի մասին իր հեղինակած պաշտոնական գրությունում վերլուծելով թուրքական իշխանությունների գործողությունները՝ հանգում էր Գեռովի տեղեկատվությունը հաստատելու եզրակացությունների:<sup>4</sup> Նա մասնավորապես գրում էր, որ ապստամբության ճնշման քողի ներքո տեղի էր ունենում «քրիստոնյաների ոչնչացում», որ օսմանյան կառավարությունը ձգտում է «լիովին ազատվել բուլղարական ոգուց» և այդ նպատակով իր հիմնական հարվածն ուղղում է հոգևորականների և ուսուցիչների դեմ:<sup>5</sup>

Դժվար չէ նկատել, որ տարբեր աղբյուրներից ստացված այս տվյալները, որոնք տեղ են գտել իրար հետ հակամարտող պետությունների պաշտոնական դիվանագիտական փաստաթղթերում, ըստ էության իրար լրացնում և հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ թուրքական կառավարական շրջանակներում իսկապես գոյություն է ունեցել բուլղարներին, որպես էթնիկական խմբի, դիտարկությամբ ոչնչացնելու ծրագիր: Այդ ծրագրի ցեղասպանական բնույթը փարակոսանք չի հարուցում:

Նկարագրելով է համեմատել, թե ինչպես են վարվել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դեսպաններն իրենց ձեռքն ընկած տեղեկությունների հետ: Ն. Պ. Իգնատևը պարզապես կցել էր Փիլիպոպոլսի փոխ-հյուպատոսից ստացված վերը նշված հաղորդագրությունը ցարին ուղարկվող իր գնկուցագրին և ուղարկել «Պերերբուրգ՝ այդպիսով հնարավորինս արագ տեղեկացնելով իր կառավարությանը բուլղարներին սպառնացող վտանգի մասին»:<sup>6</sup>

Դեսպան Ն. Էլիոթն, որի անձնական բարեկամությունը Միդհապ փաշայի հետ ժամանակակիցների համար գաղտնիք չէր, ապա նա, ըստ էության, չէր վստահել այդ տեղեկություններին և Մալոնիկի բրիտանական հյուպատոսին դիմել էր մեծագույն զգուշավորությամբ ձևակերպված «հատուկ խնդրանքով» (sic!). պարզել, արդյո՞ք մահմեդականների հարձակումները քրիստոնյաների վրա կարող են լինել «նախապես պատրաստված հարձակման» արդյունք:<sup>7</sup> Հրապարակված բրիտանական փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ նա այդպես էլ Լոնդոնին տեղյակ չպահեց իր ստացած կարևոր տեղեկության մասին: Դրա պատճառը, թերևս, այն էր, որ նրան հայտնի էր, որ այդ հրեշավոր ծրագրի հեղինակներից էր Միդհապ փաշան, որը հենց նույն Էլիոթի անվերապահ աջակցությամբ ղեկավարում էր սահմանադրական շարժումը մայրաքաղաքում:

Իսկ ռուսական դիվանագիտությանը հաջողվել էր պարզել, որ բացի Միդհապից այդ ծրագրի հեղինակությունը պատկանում էր նաև վերը նշված Նյուսեյն Ավնի փաշային, իսկ վերջնական որոշումը ընդունվել էր կառավարության նիստի ընթացքում:<sup>8</sup> Ռուս դիվանագետները հայտնում էին, որ կառավարության որոշումը վերաբերում էր ոչ միայն բուլղարների բնաջնջմանը, այլ նաև Բալկանյան թերակղզու ողջ սլավոնական ազգաբնակչությանը «սիստեմատիկ կոտորելուն»:<sup>9</sup>

Այդ ամիսներին Կ. Պոլսում գտնվող երիտասարդ ռուս թուրքագետ Վասիլի Սմիռնովը,<sup>10</sup> հենվելով «ստամբուլյան հարաբերություններին լավ ծանոթ մարդկանցից» ստացված տեղեկությունների վրա, տալիս է երեք թուրք պետական գործիչների անունները, որոնք կազմում էին, ըստ իր բնութագրման, «բուլղարական սարսափների դժոխային եռյակը»: Բացի Միդհապ փաշայից հիշյալ եռյակի մեջ էին մտնում՝ այդ տարիների խոշոր պետական գործիչ ու ճանաչված բառարանագետ Ահմեդ Վեֆիք փաշան և «նոր օսմանցիների» շարժման առաջնորդներից Ալի Սուավին:<sup>11</sup> Մրանք, ըստ Սմիռնովի, նպատակադրել էին «սիստեմատիկորեն ոչնչացնել իրենց համար արելի բուլղարներին և... համառորեն հետևում են իրենց ծրագրին...»:<sup>12</sup> Ծարունակելով հետաքրքրվել այդ խնդրով՝ ռուս դիվանագետները կարողացան բացահայտել այդ ցեղասպանական ծրագրի մի շարք այլ մանրամասներ: Համաձայն Ռուսե քաղաքի ռուսական գլխավոր հյուպատոս Վ. Ֆ. Կոմենիկովի ստացած տեղեկությունների, կայսրության մայրաքաղաքում Միդհապ փաշայի ղեկավարությամբ գործում է գաղտնի կոմիտե՝ «Մյուսիյուրգե» («Ավել») անվանումով: Ըստ այդ տեղեկության «Մյուսիյուրգեի» թիրախը միայն բուլղարները չէին, նրա նպատակն էր «բարոյապես ու նյութապես» ոչնչացնել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը:<sup>13</sup>

Այդ ոճրագործ խմբակի գոյության մասին ռուսական դիվանագի-  
պությանը հայտնի էր դարձել 1876թ. նոյեմբերին: Սակայն ըստ երևույթին  
այն ստեղծվել էր ավելի վաղ, դեռևս այդ նույն փարվա մայիսին, երբ կա-  
ռավարությունը Միդիապի և Նյուսեյն Ավնիի ճնշման ներքո ընդունել էր  
վերոհիշյալ որոշումը՝ բուլղարներին ոչնչացնելու մասին: Նեպագայում,  
Նյուսեյն Ավնիի սպանությունից հետո (նույն թվականի հունիսի 15-ին)  
այն համալրվել էր նոր անդամներով (հայտնի են Վեֆիթ փաշայի և Ալի  
Մուավլիի անունները), սակայն, ինչպես վկայում է հաղորդագրությունը  
«Մյուսիյուրգեի» մասին, Միդիապը պահպանել էր իր ղեկավար դիրքը:

1876թ. երկրորդ կեսի իրադարձությունները վկայում են, որ փեղե-  
կարվությունն այն մասին, թե «Մյուսիերգե» հանցավոր խմբակը նախա-  
պարտասպում է երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչության զանգվածա-  
յին կոտորածներ, համապարասխանում է իրականությանը: Այդ ընթաց-  
քում, օրինակ, մահմեդական հոգևորականության հակաքրիստոնեական  
քարոզչությունը զնալով սաստկանում է: Այդ փաստը արձանագրել է ժա-  
մանակի մամուլը:<sup>14</sup> Նեպոգեպե այն ընդունում է քրստոնյաներին ֆիզիկա-  
կան բնաջնջման ենթարկելու կոչերի ձև: Այդ փաստը չէր վրիպել ռուսա-  
կան դիվանագետների ուշադրությունից: «Խոջաները», - գրում էր դես-  
պան Իզնավրևը ցարին, - սկսում են բացեփրաց հանդես գալ «գյավուրնե-  
րին» ոչնչացնելու կոչերով:<sup>15</sup>

Նկատվում է գործողությունների և քարոզչության որոշակի համա-  
կարգում բարձրագույն իշխանությունների և մահմեդական հոգևորակա-  
նության միջև: Սակայն փարակուսանք չի հարուցում, որ նախաձեռնությու-  
նը պարկանում էր կառավարությանը և պարճառը ոչ թե և ոչ այնքան  
մահմեդական մոլեռանդությունն էր, որը դարեր շարունակ գոյություն ուներ  
Օսմանյան կայսրության մահմեդական ազգաբնակչության միջավայրում,  
այլ երկրի բարձրագույն իշխանությունների նոր քաղաքականությունը բուլ-  
ղարների և այլ քրիստոնյաների նկատմամբ: Այս կարևոր հանգամանքը  
ընդգծել է դեռևս այդ իրադարձությունների մեզ անհայտ ժամանակակիցը՝  
դեսպան Իզնավրևի անձնական ֆոնդում այլ ձեռագրերի հետ պահվող  
անստորագիր վերլուծական փեղեկագրի հեղինակը: Նա գրում է. «Առաջ-  
ներում քրիստոնյաներին ճնշում ու ջարդում էին մահմեդականները, այժմ  
նրանց ճնշում ու ջարդում է կառավարությունը»:<sup>16</sup> Այդ փեղեկագրը կիսում էր  
նաև Իզնավրևը: Պեպերբուրգ ուղարկած իր զեկուցագրերից մեկում նա  
ընդգծում է, որ ուժեղացող մահմեդական մոլեռանդության պարճառը թուր-  
քական կառավարման համակարգի ներկայացուցիչների մեծ մասի գործ-  
ղություններն են՝ ամենավերևում գտնվողից մինչև ամենաստորինը:<sup>17</sup>

Կարելի է արձանագրել, որ ամռան և աշնան ամիսների ընթացքում ոճ-  
րագործ խմբակի ծրագրերը ընդլայնվել էին և սկսել էր նախապարտասպել  
կայսրության ողջ քրիստոնյա ազգաբնակչության զանգվածային կոտորած-  
ներ: Դրա մասին է վկայում ոչ միայն Վ. Ֆ. Կոմենիկովի վերը նշված հաղոր-  
դագրությունը: Դեռևս հոկտեմբերին Իզնավրևը հաղորդում էր Ալեքսանդր  
Գորչակովին, «որ լիովին հիմնավորված է վախը ներքին կոտորածներից»:<sup>18</sup>

Փաստերը վկայում են, որ 1876թ. վերջին ամիսներին թուրքական իշ-  
խանությունները պարտասպում էին կազմակերպել նոր հայերի լայնածա-  
վալ կոտորածներ: Արդեն հոկտեմբերի սկզբներին հայկական մամուլը ար-  
ձանագրեց հայերի դեմ ուղղված մահմեդական մոլեռանդության ուժեղաց-  
ման փաստը, միաժամանակ զգուշորեն ենթադրելով, որ այդ փեղի է ունե-  
նում փեղակալ իշխանությունների թույլտվության պայմաններում:<sup>19</sup> Նույն  
ժամանակահատվածում թուրքական մամուլը, մասնավորապես կառավա-  
րության շեփորը հանդիսացող «Բասիրեթ» լրագիրը, մեղադրում է հայե-  
րին, թե իբր նրանք՝ Պոլսի պարթիարքի ղեկավարությամբ նախապար-  
տասպում են զինված ապստամբություն,<sup>20</sup> այդպիսով հող նախապարտա-  
սպելով կոտորածի համար: Ռուսական դիվանագիտական հուշագրերը հնա-  
րավորություն են տալիս պարկերացում կազմել այդ ծրագրի որոշ մանրա-  
մասների մասին: Նոկտեմբերին Գորչակովին հղած իր զեկուցագրերից մե-  
կում Իզնավրևը, հենվելով Պոլսո հայ պարթիարքի կողմից իրեն հայտնած  
փեղեկության վրա, գրում է, որ Միդիապը մեղադրել է հայերին, թե իբր  
նրանք մեծ քանակությամբ զենք են գնել արքայասահմանում և նախապար-  
տասպում են ապստամբություն Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջան-  
ներում, որպեսզի «ապահովեն Ռուսաստանի միջամտությունը»:<sup>21</sup>

Այսպիսով, դժվար չէ եզրակացնել, որ կոտորածն իրականացվելու էր  
հենց այդ պարթիարքի: Նմանությունը «երիտասարդ» կամ «նոր» օսմանցի-  
ների առաջնորդի և երիտթուրքերի պարագլուխների գործելակերպի միջև  
ակնառու է: Ավելորդ չէ նշել, որ Ռուսաստանի գործունե մեծ դեր է խաղացել  
նաև Միդիապի հակաբուլղարական ծրագրերում: Իզնավրևի զեկուցագրե-  
րից մեկում բերված են Միդիապ փաշայի հեղուկալ խոսքերը՝ ուղղված բուլ-  
ղարների ներկայացուցիչներին. «Դուք ձեր հույսը դնում եք Ռուսաստանի  
վրա, սակայն երբ նա վերջ է վերջո կգա, նա կգորնի միայն ավերակներ»:<sup>22</sup>

Նոյեմբերի վերջերին Կ. Պոլսի ռուս դեսպանը մեկ անգամ ևս հայտ-  
նեց Պեպերբուրգին, թե հյուպատոսները հաղորդում են, որ Օսմանյան  
կայսրության ողջ փարածքի վրա շարունակվում է քրիստոնյաների «ա-  
ղաղակող ճնշումը», ընդ որում, ոչ միայն սլավոնների, այլ նաև «Փոքր  
Ասիայի քրիստոնյաների»:<sup>23</sup>

Ահա այս պայմաններում էր, որ Կոնստանդնուպոլսի Վանի դեկրետների 1-ի հայերնի հրկիզումը՝ կազմակերպված Կոնստանդնուպոլսի թուրքական իշխանությունների կողմից: Այդ իրադարձությանը հայրենական պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է, սակայն դիտարկել է այն որպես մեկուսի երևույթ: Մինչդեռ, ինչպես վկայում է իր կոնֆիդենցիալ զեկուցագրում Իգնատիոս վերջինիս գաղտնի գործակալ Պ. Անիմոն, որը Միդիայի օգնականն էր, անձնական թարգմանիչը և այդպիսով լավատեղյակ էր երկրի անցուցարձին, այդ թվում նաև այնպիսի իրադարձություններին, որոնք իշխանությունները պահում էին գաղտնի: Հայերնի է, որ թուրքական կանոնավոր բանակը իրականացրեց «գազանություններ Յոզգալի հայկական գյուղերում»:<sup>24</sup> Անտարակույս, բանակը ստացել էր համապատասխան հրաման, հեղափոխություն, կարելի է եզրակացնել, որ հայերի դեմ նախապատրաստվող կոտորածի վրանգը բավական իրական էր:

Ի մի բերելով փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ թուրքական բարձրագույն իշխանությունների հակազդեցությունը 1876թ. Բուլղարիայում ծավալված ազգային-ազատագրական շարժմանը իր մեջ պարունակում էր ցեղասպանության քաղաքականության որոշակի փայտեր: Մասնավորապես բրիտանական ու ռուսական դիվազիպական փաստաթղթերի քննությունը՝ ցեղասպանագիտության լույսի ներքո, հնարավորություն տվեց բացահայտելու բուլղարներին, որպես առանձին էթնիկական միավորի, ոչնչացնելու ծրագրի գոյությունը:

Այդ ծրագիրը, ինչպես տեսանք, կազմվել էր մի խումբ թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կողմից և հավանության արժանացել կառավարության կողմից՝ ստանալով այդպիսով պաշտոնական փաստաթղթի կարգավիճակ: Ի կարարումն այդ ծրագրի համապատասխան ցուցումներ են տրվել տեղական իշխանություններին: Այսպիսով, թուրքական իշխանությունների կողմից բուլղարների դեմ իրականացված գործողություններում առկա է դիտարկության հանգամանք: Վերընշվածը ցույց է տալիս, որ թուրքական իշխանությունների հակազդեցությունը 1876թ. բուլղարական ապստամբությանը պարունակում էր հստակ արտահայտված ցեղասպանական դիտարկության հանգամանք, ինչը հնարավոր է դարձնում բնութագրել այն որպես միջանկյալ փուլ կոտորածի և ցեղասպանության քաղաքականությունների միջև:

Ներազայում, 1876թ. աշնանը այդ խմբի հանցավոր ծրագրերն ընդլայնվեցին և սկսեցին վերաբերել երկրի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը, այդ թվում, նաև հայերին:

Ուշագրավ է, որ բոլոր երեք վկայություններն էլ, որոնք պարունակում են տեղեկություններ այդ խմբի մասին, հիշատակում են Թուրքիայի հայրենի պետական գործիչ և սահմանադրական շարժման առաջնորդ Միդիայի փառալուստի անունը, իսկ փաստաթղթերից մեկը ուղղակի նշում է, որ այդ խմբի ղեկավարը նա էր:

Գոյություն ունեն նաև այլ վկայություններ, որոնք հաստատում են, որ Միդիայի՝ քրիստոնյաների և մահմեդականների միջև «եղբայրություն և հավասարություն» հաստատելու անհրաժեշտության մասին հրապարակայնորեն արվող հայտարարություններն ընդամենը քաղաքական շղարջ էին և քողարկում էին նրա բուն հայացքները: Այսպես, օրինակ, Միդիայը, համաձայն նրան անձամբ ճանաչող ֆրանսիացի Բենուա Բրունսվիլի, իրականում այն կարծիքին էր, որ թուրք ղեկավարների ներկա սերնդի «նախնիները սխալվեցին՝ չստիպելով մեր հայրականներին... ընդունել իսլամ: Դա պետք է սկսել: Այսուհետև պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները, որպեսզի փոխենք ի օգուտ մեզ երկու կրոնների [ի նկատի ունի իսլամը և քրիստոնեությունը - Ռ. Մ.] միջև գոյություն ունեցող թվային հարաբերակցությունը»:<sup>25</sup>

Այդ գործիչը, որը համարվում է Թուրքիայի պատմության ամենաառաջադեմ և լուսավորչական պետական այրերից մեկը, իրականում հիմք դրեց այն ցեղասպան քաղաքականությանը, որ փաստնամայակներ անց վարեցին հայ ժողովուրդի դեմ Աբդուլ Համիդը, երիտթուրքերն ու քեմալականները:

Միդիայի և նրա գործակիցների հրեշավոր ծրագրերը չիրականացան: Նրանք չհասցրեցին գործի դնել «ավելը» և «մաքելը» բուլղարներին ու քրիստոնյաներին ընդհանրապես: Սակայն չանցած երկու տասնամյակ՝ թուրքական իշխանությունները՝ ի դեմս սուլթան Աբդուլ Համիդի և նրա հանցավոր գործակիցների, մշակեցին ցեղասպանության նոր ծրագիր՝ գոհ ընկալելով հայ ժողովուրդին: Այս ծրագիրը նախապատրաստված էր ավելի մեծ հեղափոխականությանը և իրականացվեց անհամեմատ ավելի մեծ «մասշտաբով», որի հետևանքով հայերի կորուստները շուրջ փաստն անգամ ավելի մեծ էին, քան թե բուլղարներինը: Թուրքական իշխանությունները շարունակում էին «հմտանալ» այդ ոճրագործ ոլորտում...

1. Տե՛ս նրա նամակը պարմաբան պրոֆեսոր Նիլ Պոպովին, որը միաժամանակ Մոսկովյան սլավոնական կոմիտեի քարտուղարն էր. Письмо болгарского журналиста Т. Бурмова Н. А. Попову, 1876г. мая 15. - Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова. Москва, 1961, с.222.

2. J. H. Dupuis to H. Elliot, May 19, 1876. – In: *The Near and Middle East, 1856-1914 Part I: British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2: The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876.* Editor: D. Gillard. Bethesda, 1985, p. 234.
3. Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876г., копия, прил.к предыд. – Архив Внешней Политики России (АВПР), ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об – 160. Վերոյի անձնական արխիվում պահպանվել է այդ փաստաթղթի մեկ այլ օրինակ, որը ժամանակին հրատարակվել էր Բուլղարիայում: Այն էականորեն չի փոփոխվում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող օրինակից: Տես. Доклад Герова. Константинополь, май 1876г. - Документы за българската история. Т. 2: Архив на Найден Геров. Ч. 2, София, 1932, с. 168-169.
4. Записка о положении в Болгарии, 25 мая/6 июня 1876г. – АВПР, ф. Канцелярия, 1876, д. 29, лл. 295 - 299.
5. Նույն փեղում:
6. М.П. Игнатъев - Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 148 - 154.
7. H. Elliot to J. E. Blunt. – In: *The Near and Middle East, 1856-1914 Part I: British Documents on Foreign Affairs. Series B: Near and Middle East, Volume 2: The Ottoman Empire: Revolt in the Balkans, 1875-1876.* Editor: D. Gillard. Bethesda, 1985, p. 238.
8. Вице-консул в Филипполе - Послу в Константинополе, 17 мая/29 мая 1876г., копия, прил.к предыд. – АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, лл. 159об.
9. Из донесения Н. Даскалова (Варна) генеральному консулу России в Русе В. Т. Кожевникову, 24 августа 1876 г. – В кн.: По следите на насието: Документы и материалы за налагане на ислам. Част първа. Съставител Петър Петров, София, 1987, с. 184.
10. Վերադասված հայրենիք. Վ. Մմիրնովը ծավալեց բեղմնավոր գիրա-մանկավարժական գործունեություն և դասվեց ռուսական թուրքագիտության ճանաչված դեմքերի շարքին: Նրա գիրական գործունեության ու պարմագիրական հայացքների մասին փես. А. С. Твертинова. В. Д. Смирнов – историк Турции (К 125-летию со дня рождения). - Советская тюркология, 1971, 4, с. 103-114.
11. В. Смирнов, Официальная Турция в лицах. Stambul und das moderne Tьrkenthum. Politische, sociale und biographische Bilder, von einem Osmanen, Leipzig, 1877. - Вестник Европы, 1878, кн. 1, с. 311.
12. Նույն փեղում:
13. В. Ф. Кожевников - Н. П. Игнатъеву, 12 ноября 1876 г., Приложение. – Освобождение Болгарии от турецкого ига: документы в трех томах. Том первый: Освободительная борьба южных славян и Россия, 1875-1877. Под ред. С. А. Никитина, В. Д. Конобеева, Ал. К. Бурмова, Н. Т. Тодорова. Москва, 1961, с.509.
14. Տես, օրինակ. Մեղու Նաշաստանի, 3 հուլիսի 1876:
15. Игнатъев-Царю, 21 мая/2 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л.153об
16. "Записка (без подписи) "О смысле кризиса, происходящего в настоящее время в Турецкой империи и о влиянии происходящих в ней реформ на ее государственный строй". – Государственный Архив РФ (ЦГАОР СССР), ф. 730 (фонд Н.П.Игнатъева), оп. 1, ед. хр. 706.
17. Игнатъев-Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 150.
18. Игнатъев-Горчакову, 13/25 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 27.
19. Տես «Մեղու Նաշաստանի», 2 հոկտեմբերի, 1876:
20. Այդ մասին հաղորդում էր նույն «Մեղու Նաշաստանի» լրագիրը իր հոկտեմբերի 23-ի համարում, հղելով Պոլսո «Նորագիրը»:
21. Игнатъев-Горчакову, 18/30 октября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л.137об – 138.
22. Игнатъев-Гирсу, 24 мая/5 июня 1876г. - АВПР, ф. Канцелярия МИД, 1876, д. 25, л.153об.
23. Игнатъев-Горчакову, 18/30 ноября 1876г. - АВПР, ф. Канцелярия, 1876, д. 32, л. 539-539об.
24. П. Анино - Н. П. Игнатъеву, 1876. – Государственный Архив РФ, ф. 730 (фонд Н.П.Игнатъева), оп. 1, ед. хр. 917.
25. В. Bruswick. La vйitй sur Midhat Pacha. Paris, 1877, p. 4.